ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/08

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Գլոբալգիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6571-2019 գրությամբ «Գլոբալգիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.04.2019թ. թիվ ՊՆ/02/193-2019 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Գլոբալգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.03.2019թ. թիվ ՊՆ/02/193-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «Գլոբալգիս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգովվերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն ներկայացված փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն:

Հանձնաժողովը «Գլոբալգիս» ՍՊԸ-ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունը և քանի որ Հավելված 6.1-ը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի գնման հայտը:»:

3. <u>«Գլոբալգիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.04.2019թ. գրությամբ դիմել է «Գլոբալգիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6571-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին 02.05.2019թ. գրությամբ հայտնել է, որ *««Գլոբալգիս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցմանը և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2»

ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընկերության էլեկտրոնային հասցեից՝ «Գլոբալգիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է հետևյալը. ««Գլոբալգիս» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Գլոբալգիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ 1-ին չափաբաժնով ներայացված տեխնիկական բնութագրում նշված է <էկրանը ոչ պակաս քան՝ 3,5 * 4,4 սմ չափսի>, <շահագործման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի>: 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է <էկրանը ոչ պակաս քան՝ 9,1 * 15,2 սմ չափսի>, <շահագործման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի>: Անհրաժեշտ է հստակեցնել էկրանի չափսերը և շահագործման երաշխիքային ժամկետները:*

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և «Գլոբալգիս» ՍՊԸ-ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունը: Մասնավորապես, «Գլոբալգիս» ՍՊԸ-ի աշխատակիցը h.mkhoyan@garmin.am էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված կարգով և սահմանված ժամկետում ուղարկել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այսինքն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի էլեկտրոնային ստորագրությունը (ինչը ապացուցվում է Ընկերության էլ. փոստի հասցեից կատարված արտապումներից, ինչը ներկայացվել է նաև Պատվիրատուին): Որից հետո, կրկին սահմանված կարգով և սահմանված ժամկետում «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի էլեկտրոնային հասցեից, այն է՝ tavros.babayan@gmail.com, Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին կրկին ուղարկվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի ստորագրությունը և Ընկերության կնիքը:

02.04.2019թ. նիստը շարունակվել է, գնահատող հանձնաժողովը քննարկել է ներկայացված շտկված անհամապատասխանությունը և քանի որ Հավելված 6.1-ը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հիմք ընդունելով հանձնաժողովի

անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ոսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Գլոբալգիս» ՍՊԸ -ն կատարել է Կարգի 48-րդ կետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո սահմանված 1 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել արձանագրված անհամապատասխանությունների շտկված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2019թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը քննարկել է ներկայացված շտկված անհամապատասխանությունը և քանի որ Հավելված 6.1-ը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Գլոբալգիս» ՍՊԸ-ի աշխատակիցը h.mkhoyan@garmin.am էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված կարգով և սահմանված ժամկետում ուղարկել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այսինքն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի էլեկտրոնային ստորագրությունը (ինչը ապացուցվում է Ընկերության էլ. փոստի հասցեից կատարված արտապումներից, ինչը ներկայացվել է նաև Պատվիրատուին):

Որից հետո կրկին սահմանված կարգով և սահմանված ժամկետում «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի էլեկտրոնային հասցեից, այն է՝ tavros.babayan@gmail.com, Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին կրկին ուղարկվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի ստորագրությունը և Ընկերության կնիքը:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 28.03.2019թ. ծանուցվել է շտկել անհամապատասխանությունները 1 աշխատանքային օրվա ընթացքում, որը Ընկերության կողմից իրականացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման վերաբերյալ ծանուցումը ստանալուն հաջորդող օրը /29.03.2019թ./:

Ցանկանում ենք փաստել, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 48-րդ կետի պահանջների խախտում, քանզի նշված կետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհապատասխանությունները, իսկ տվյալ դեպքում առկա է

«Գլոբալգիս» ՍՊԸ-ի կողմից /շտկված/ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու վերաբերյալ բոլոր ապացույցները, ինչպես նաև այն ապացույցները, որանք ապացուցում են այդ փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ստորագրված լինելը (կցվում են):»

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել են «Գլոբալգիս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար նավիգացիոն և գեոդեզիական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցմանթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբալգիս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե նշել է tavros.babayan@gmail.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գլոբալգիս» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

www.armeps.am համակարգի միջոցով «Գլոբալգիս» ՍՊԸ-ին 19.03.2019թ. ուղարկված ոչ ավտոմատ ծանուցման համաձայն՝ առաջարկվել է ներկայացնել հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 28.03.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Գլոբալգիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ 1-ին չափաբաժնով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է «էկրանը ոչ պակաս քան՝ 3,5 * 4,4 սմ չափսի», «շահագործման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի»: 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է «էկրանը ոչ պակաս քան՝ 9,1 * 15,2 սմ չափսի, «շահագործման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի»: Անհրաժեշտ է հստակեցնել էկրանի չափսերը և շահագործման երաշխիքային ժամկետները:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և «Գլոբալգիս» ՍՊԸ-ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Գլոբալգիս» ՍՊԸ-ի աշխատակիցը h.mkhoyan@garmin.am էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված կարգով և սահմանված ժամկետում ուղարկել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

«Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի էլեկտրոնային հասցեից՝ tavros.babayan@gmail.com, Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում կրկին ուղարկվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Տավրոս Բաբայանի ստորագրությունը և Ընկերության կնիքը:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ քանի որ Հավելված 6.1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի գնման հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6571-2019 գրությամբ «Գլոբալգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով,

32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները

բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում,

43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի, Կարգի 47-րդ կետի և Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղն զբաղեցրած

մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է:

- www.armeps.am համակարգի միջոցով «Գլոբալգիս» ՍՊԸ-ին 28.03.2019թ. ուղարկված ոչ ավտոմատ ծանուցման համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը: Միաժամանակ մասնակցին հայտնել է, որ անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

- «Գլոբալգիս» ՍՊԸ-ի հայտի թիվ 1 հավելվածում նշված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից՝ tavros.babayan@gmail.com, Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում ուղարկվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց վրա առկա է եղել «Գլոբալգիս» ՍՊԸ-ի տնօրեն Բաբայան Տավրոսի ստորագրությունը և Ընկերության կնիքը, սակայն Ընկերության կողմից թիվ 6.1 հավելվածում բացակայել է էլեկտրոնային տվային ստորագրությունը, ինչ պատճառով գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

Տվյալ դեպքում մասնակցի ներկայացրած թիվ 6.1 հավելվածը չի համապատասխանում հրավերով սահմանված կարգին (առկա չէ էլեկտրոնային թվային ստորագրություն), որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Ինչ վերաբերում է Ընկերության դիրքորոշման մեջ նշված այն փաստին, որ «Գլոբալգիս» ՍՊԸ-ի աշխատակիցը h.mkhoyan@garmin.am էլեկտրոնային հասցեից Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլեկտրոնային հասցեին սահմանված կարգով և սահմանված ժամկետում ուղարկել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ այդ փաստը չի կարող հիմք հանդիսանալ գնահատող հանձնաժողովի համար սահմանված կարգով ընդունելու ներկայացված փաստաթղթերը, քանի որ հրավերով սահմանված թիվ 1 հավելվածով պարտադիր նշվում է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ այս դեպքում որպես «Գլոբալգիս» ՍՊԸ-ի հասցե՝ նշվել է tavros.babayan@gmail.com: Այս պարագայում գնահատող հանձնաժողովի կողմից իրավաչափորեն հիմք է ընդունվել պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված նյութերը, որի մեջ բացակայել է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գլոբալգիս» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6571-2019 գրությամբ «Գլոբալգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Գլոբալգիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ